ԼՐԱՏՈՒ ХРОНИКА

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ՝ ՆՎԻՐՎԱԾ ՀՈԿՏԵՄԲԵՐՅԱՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՄԵԾ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ 50-ԱՄՅԱԿԻՆ

1967 թ. հոկտեմբերի 31-ին կայացավ ՀՍՍՀ գիտությունների ակադեմիայի ընդհանուր ժողովը՝ նվիրված Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության 50-ամյակին։

Հոբելյանական ժողովը համընկավ հայ գիտնականների համար ուրախալի իրադարձության հետ՝ հանրապետության գիտությունների ակադեմիան պարգևատրվեց Հայաստանի կոմկուսի կենտկոմի, ՀՍՍՀ Գերագույն սովետի, ՀՍՍՀ Մինիստրների սովետի և Հայաստանի արհմիությունների խորհրդի հուշադրոշով։

Ընդհանուր ժողովին մասնակցում էին հանրապետության կոմունիստական կուսակցության և կառավարության ղեկավարներ Ա. Քոչինյանը, Բ. Մուրադյանը, Ռ. Խաչատրյանը, Լ. Ղարիբջանյանը, Ռ. Ղարիբջանյանը։

Ներածական խոսքով ժողովը բացեց ակադեմիայի պրեզիդենտ Վ. Համբարձումյանը։

— Այս օրերին,— ասաց նա,— սովետական ողջ ժողովուրդը ուրախությամբ ու հպարտությամբ նշում է Հոկտեմբերյան հեղափոխության պանծալի 50-ամյակը... Այդ տոնը արժանավայել կերպով է դիմավորում նաև սովետական գիտությունը։ Կարծես ի հաստատումն այն բանի, թե ինչպիսի բարձունքների է հասել մեր գիտությունը, փառապանծ Հոբելյանի նախօրյակին սովետական ավտոմատ կայանը փափուկ վայրէջք կատարեց Վեներա մոլորակի վրա և երկիր հաղորդեց այնպիսի արժեքավոր գիտական տեղեկություններ, որոնք դեռևս մի քանի ամիս առաջ մարդկությանը անմատչելի էին թվում։ Այդ նշանակալի հաղթանակը ձեռք բերելու համար ջանք են թափել նաև մեր հանրապետության գիտնականները։ Հոբելյանական տարում — այնուհետև ասաց Վ. Համբարձումյանը,— երկրի մի շարք գիտական հաստատություններ արժանացել են կառավարական բարձր պարգևների։ Դրանց թվում է Բյուրականի աստղադիտարանը, որին հանձնվել է Լենինի շքանշան։

Հայաստանի կկ կենտկոմի, ՀՍՍՀ Գերագույն սովետի, ՀՍՍՀ Մինիստրների սովետի և Հայաստանի արհմիությունների խորհրդի հուշադրոշը հանձնելով, Հայաստանի կոմկուսի կկ առաջին քարտուղար Ա. Քոչինյանն ասաց.

— Անցած կես դարի ընթացքում հեքիաթային փոփոխություններ են տեղի ունեցել Սովետական Հայաստանում, նրա տնտեսության, մշակույթի, գիտության ասպարեզում։ Եվ այդ բանում մեծ ծառայություն ունի գիտությունների ակադեմիան։ Այսօր մենք խորին երախտագիտությամբ ենք տալիս մեր այն գիտնականների անունները, որոնք հաջողությամբ առաջ են տանում սովետական գիտությունը, անուններ, որոնք լայնորեն հայտնի են ոչ միայն մեր հանրապետությունում, այլև նրա սահմաններից դուրս։

Ընդունելով հուշադրոշը և ջերմ շնորհակալություն հայտնելով բարձր պարգևի համար, ակադեմիայի պրեզիդենտ Վ. Համբարձումյանն ասաց, որ հուշադրոշը հանրապետության գիտնականներին պարտավորեցնում է էլ ավելի լավ աշխատել ի փառս սովետական գիտության։

Հոբելյանական ժողովում կարդացվեց երեք զեկուցում։ «Հոկտեմբերյան հեղափոխությունը և Հայաստանի վերածնունդը» թեմայով զեկուցմամբ հանդես եկավ ՀՍՍՀ ԳԱ թղթակից-անդամ Գ. Բ. Ղարիբջանյանը։ Զեկուցողը խոսեց Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միացնելու հրատապ նշանակության մասին։ Պատմական այդ իրադարձության շնորհիվ հայ ժողովուրդն իր բախտը կապեց լենինիզմի հայրենիքի հետ։ Ռուս հեղափոխականների հետ ուս-ուսի հայ հեղափոխականները պայքարում էին ընդհանուր ճնշողներին տապալելու համար։ Հայ ժողովրդի ազատագրման գործում հսկայական դեր ունի Վ. Ի. Լենինը, որի զինակիցների թվում կային շատ հայ բոլշևիկներ։ Զեկուցման մեջ մեծ տեղ էր հատկացված պատմության բուրժուական կեղծարարների մերկացմանը, որոնք ամեն կերպ ջանում են նսեմացնել Հոկտեմբերի հաղթանակի նշանակությունը հայ ժողովրդի պատմական ճակատագրում։ Այդ հերյուրանքների լավագույն հերքումն են Հայաստանի հոյակապ նվաճումները ՍՍՀՄ ժողովուրդների եղբայրական ընտանիքում։

Այնուհետև Սովետական Հայաստանի արդյունաբերական զարգացման մասին զեկուցում

կարդաց ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Ա. Ա. Առաքելյանը։ Նա հանգամանորեն բնութագրեց հանրապետության արդյունաբերական զարգացման պատմական փուլերը, ինչպես նաև Հայաստանում հզոր արդյունաբերության և բարձր զարգացած գյուղատնտեսության ստեղծման հետ կապված հարցերը։ Զեկուցողը նշեց, որ միայն մեկ տարվա կապիտալ ներդրումների ծավալն այժմ գերազանցում է սովետական իշխանության առաջին 25 տարիների ընթացքում այդ նպատակին հատկացված գումարները։

Թեև Հայկական ՍՍՀ-ն բռնում է միութենական տերիտորիայի 0,1 տոկոսից քիչ ավելին և նրա բնակչությունը կազմում է ՍՍՀՄ բնակչության 1 տոկոսից պակաս, այնուամենայնիվ հանրապետությունում թողարկվող արդյունաբերական արտադրանքի 15 տեսակների տեսակարար կշիռը կազմում է այդ ապրանքների միութենական արտադրության 5—35 տոկոսը։ Դրանց թվում են այնպիսի կարևոր արտադրատեսակներ, ինչպես քիմիական և լեռնահանքային արդյունաբերության արտադրանքը, շարժական էլեկտրակայանները, ուժային տրանսֆորմատորները, մետաղահատ հաստոցները և այլն։

«Հոկտեմբերը և գիտության զարգացումը Հայաստանում» զեկուցումով հանդես եկավ Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի պրեզիդենտ, ակադեմիկոս Վ. Հ. Համբարձումյանը։ Նա նշեց հասարակության հեղափոխական վերափոխման և մեր երկրում գիտության աննախընթաց զարգացման միջև գոյություն ունեցող անմիջական կապը։ Միայն այնպիսի հասարակության մեջ,— ասաց Վ. Համբարձումյանը,— որը ձգտում է ժողովրդի ողջ կյանքը դնել գիտական հիմքերի վրա, գիտությունը կարող է ստանալ բոլոր անհրաժեշտ պայմաններն իր զարգացման համար։

Զեկուցողն ըստ փուլերի նկարագրեց գիտության զարգացումը Սովետական Հայաստանում, որի կարևոր իրադարձություններից է Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի հիմնադրումը 1943 թ.։ Այնուհետև Վ. Հ. Համբարձումյանը կանգ առավ գիտության առանձին բնագավառների զարգացման վրա և նշեց այն խնդիրները, որոնք ներկայումս դրված են հանրապետության գիտնականների առաջ։

Վերջում ժողովի մասնակիցները մեծ ոգևորությամբ ընդունեցին ողջույնի նամակ՝ ուղղված ՍՄԿԿ ԿԿ-ին, ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահությանը և ՍՍՀՄ Մինիստրների սովետին։

Վ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԱՆԴՐԿՈՎԿԱՍՅԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՆԵՐԻ ՄԻԱՑՅԱԼ ԳԻՏԱԿԱՆ ՆՍՏԱՇՐՋԱՆԸ

Երևանի պետական համալսարանի նախաձեռնությամբ, Հոկտեմբերի 50-ամյակի նախօրյակին մեր հանրապետության մայրաքաղաքում տեղի ունեցավ Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի համալսարանների միացյալ գիտական նստաշրջանը։ Նստաշրջանի երեք օր տևող աշխատանքներին (Հոկտեմբերի 4—6-ը) մասնակցեցին համալսարանի ուսանողության և պրոֆեսորա-դասախոսական կազմի ներկայացուցիչները, ինչպես նաև եղբայրական հանրապետություններից ժամանած մեծաթիվ հյուրեր։

Իր բացման խոսքում Երևանի համալսարանի ռեկտոր, ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Մ. Ներսիսյանը ասաց, որ Հոկտեմբերյան հեղափոխությունը գրեց մարդկության պատմության նոր դարաշրջանի սկիզբը, բացեց կապիտալիզմից սոցիալիզմին անցնելու դարաշրջանը, սոցիալիստական հասարակարգի հաստատման ու հաղթանակի դարաշրջանը։ Նա նշեց, որ մեր կյանքի կենդանի հերոսական ժամանակաշրջանում Սովետական Միությունում իրականացվեց քաղաքական, տնտեսական և մշակութային կյանքի անախադեպ վերելք, ծնվեցին ինտերնացիոնալիստական ոգով գաստիարակված սերունդներ, որոնց շարքերից էլ աճեցին գիտության և մշակույթի ականավոր շատ գործիչներ։ Ակադեմիկոս Մ. Ներսիսյանը իր խոսքի վերջում շեշտեց, որ մեր կյանքի այդ մեծ վերածնունդի արտահայտություններից մեկն էլ եղբայրական համալսարանների սույն գիտական նստաշրջանն է։

Հկկ Կենտկոմի անունից ողջունելով նստաշրջանի մասնակիցներին, Կենտկոմի քարտուղար Ռ. Խաչատրյանը նշեց, որ Հոկտեմբերյան հեղափոխության ամենացայտուն նվաճումներից մեկը մեր երկրի բոլոր ժողովուրդների և, մասնավորապես, անդրկովկասյան ժողովուրդների բարեկամությունն է։ Նա նստաշրջանը բնութագրեց որպես Վրաստանի, Հայաստանի և Ադրբեջանի միջև գոյություն ունեցող սերտ կապերի ու համագործակցության չերմ դրսևորումներից մեկը։ Մեծ նշանակություն ուներ գիտնականների, մշակույթի և արվեստի գործիչների աշխատանքների կոորդինացումը։